ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3276-Ա « 01 » հուլիսի 2026 թ.

ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 11-ՐԴ ՀԱՏՎԱԾԻ Հ.4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Պավլիկ Ասատրյանի լ/ա Մերուժան Շահինյանի դիմումը՝ Սիլիկյան թաղամասի 11-րդ հատվածի հ.4 հասցեում գտնվող /տնամերձ/ հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել ՀՀ Երևան քաղաքի ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային խորհրդի 20.03.1992թ. հ.10/5 որոշումը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 10.06.2024թ. հ.Հ-6627 արխիվային տեղեկանքը և կից քաղվածքը, ՀՀ Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղապետարանի 27.09.2004թ. հ.26/14-3350 արխիվային քաղվածքը, Աջափնյակ համայնքի թիվ 1 թաղային տեղամասի տեղեկանքը, ՀՀ Երևանի Աջափնյակ թաղապետարանի 25.10.2004թ. հ.28/Ա-235 տեղեկանքը և կից քաղվածքը**:**

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշման հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 9-րդ գոտում /ծածկագիր՝ 01-001-0433-0012, համաձայն՝ ՀՀ կառավարության 24.12.2009թ. հ.1517-Ն որոշման/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Ն/51842-24 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Սիլիկյան թաղամասի 11-րդ հատվածի հ.4 հասցեում գտնվող 367.50քմ մակերեսով /տնամերձ/ հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ